ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Քաղաքաշինության կոմիտեի նախագահ

_____ **Արմեն ՂՈՒԼԱՐՅԱՆ**

ԾՐԱԳԻՐ

Քաղաքաշինության կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության հաշվապահական հաշվառման և հաշվետվության բաժնի փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների

Փորձագետի ներգրավման դեպքը և հիմնավորումները

Հաշվի առնելով Քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կատարման պատասխանատվությամբ նախատեսված բյուջետային ծրագրային ծախսերի ավելացման հետևանքով Կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության (այսուհետ՝ Վարչություն) հաշվապահական հաշվառման և հաշվետվության բաժնի 2023 թվականին կատարման ենթակա աշխատանքների ծավալների ավելացման միտումը և Վարչության չհամալրված աշխատատեղերի առկայությունը, անհրաժեշտություն է առաջացել պայմանագրային հիմունքներով ներգրավել համապատասխան փորձագետի:

Աշխատանքների իրականացման ժամանակահատվածը

Փորձագետը ներգրավվում է մինչև մեկ տարի ժամկետով:

Փորձագետին ներկայացվող պահանջները

1) Հաշվապահական հաշվառում և աուդիտ մասնագիտությամբ բարձրագույն կրթություն.

2) հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ.

3) իր լիազորությունների հետ կապված անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն.

4) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Ծրագրի ակնկալվող արդյունքը

Վարչությանը վերապահված առկա խնդիրների լուծման շրջանակներում փորձագետն իրականացնելու է ծրագրով նախատեսված հետևյալ աշխատանքները՝

1. պարբերաբար իրականացնում է Client-TREASURY ծրագրային համակարգով կատարված էլեկտրոնային վճարային գործարքների վերաբերյալ արտահանված տեղեկատվության հաշվարկային (կատարողական) փաստաթղթերի հաշվեգրված տվյալների հետ համադրման, ճշտության ու համապատասխանության ստուգման աշխատանքներ (շարունակական),
2. էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթերի հիման վրա իրականացնում է ապրանքանյութական արժեքների մուտքագրում հաշվապահական հաշվառման էլեկտրոնային համակարգում (ՀԾ) և ստորաբաժանումների կողմից ներկայացված պահանջագրերի հիման վրա իրականացնում է պահեստից ապրանքների դուրսգրում (շարունակական),
3. ընտրանքային կարգով իրականացնում է հաշվապահական հաշվառման էլեկտրոնային համակարգում (ՀԾ) հաշվառված հիմնական միջոցների փաստացի առկայության, գտնվելու վայրի ստուգման և ուսումնասիրման աշխատանքներ (շարունակական),
4. իրականացնում է հաշվապահական հաշվառման ձևակերպումների փաստաթղթավորման և արխիվացման ենթակա փաստաթղթերի նախապատրաստում (շարունակական):

Աշխատանքի գնահատման չափանիշները

Աշխատանքի արդյունքները ներկայացվում են ամփոփ հաշվետվության ձևով, որում ներառված ստորև ներկայացված բաղկացուցիչները հանդիսանում են գնահատման առարկա և չափանիշ՝

1) Client-TREASURY ծրագրային համակարգով կատարված էլեկտրոնային վճարային գործարքների վերաբերյալ արտահանված տեղեկատվության հաշվարկային (կատարողական) փաստաթղթերի հաշվեգրված տվյալների հետ համադրման և ստուգման արդյունքների վերաբերյալ եզրակացություն,

2) էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթերի հիման վրա իրականացրած ապրանքանյութական արժեքների հաշվապահական հաշվառման էլեկտրոնային համակարգում (ՀԾ) մուտքագրման և ստորաբաժանումների կողմից ներկայացված պահանջագրերի հիման վրա պահեստից ապրանքների դուրսգրման իրականացրած արդյունքների հիման վրա ներկայացվող հաշվետվություն,

3) հաշվապահական հաշվառման էլեկտրոնային համակարգում (ՀԾ) հաշվառված հիմնական միջոցների փաստացի առկայության, գտնվելու վայրի ստուգման և ուսումնասիրման արդյունքների հիման վրա ներկայացվող հաշվետվություն և փաստաթղթային կարգավորման առաջարկություններ,

4) հաշվապահական հաշվառման ձևակերպումների փաստաթղթավորման և արխիվացման ենթակա փաստաթղթերի նախապատրաստման աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:

<u>Հաշվետվությունների ներկայացման և դրանց գնահատման արդյունքների ամփոփիչ ժամկետները</u>

Փորձագետն ամփոփ հաշվետվությունը ներկայացնում է

- ծրագրի ավարտից հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում, որը գնահատվում է ավարտական փուլով:
- Կատարված աշխատանքի արդյունքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց:

Գլխավոր քարտուղար՝ Արամ Մկրտչյան

Գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Կարեն Անտոնյան

Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության պետ՝ Հասմիկ Բաղինյան

Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության հաշվապահական հաշվառման և հաշվետվության բաժնի պետ-գլխավոր հաշվապահ՝ Դավիթ Խաչատրյան

Անձնակազմի կառավարման բաժնի պետ՝ Ալվարդ Գրիգորյան

Տեղեկատվություն

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության հաշվապահական հաշվառման և հաշվետվության բաժնում փորձագետ ներգրավելու համար դիմած և պայմանագիր կնքած անձի մասին

N	**Պաշտոնի անվանում**	**Դիմողի անուն, հայրանուն, ազգանուն**	**Պայմանագիր կնքած անձի անուն, հայրանուն, ազգանուն**
1.	Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության հաշվապահական հաշվառման և հաշվետվության բաժնի փորձագետ	Սուսաննա Թորգոմի Զաքոյան	Սուսաննա Թորգոմի Զաքոյան

20.01.2023թ.